Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
օգոստոսի 5-ի N 482 - Ա
որոշման

«ՏԱՇԻՐ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ԾՐԱԳԻՐԸ

1.	Ծրագրի նպատակը	Տաշիր խոշորացված համայնքի Լեռնահովիտ գյուղի փողոցների և հարակից տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացումը պայմանավորնած է առկա անցուղիների կիսաքանդ վիճակով և գյուղի գլխավոր փողոցի հարակից տարածքն ավելի բարեկարգ դարձնելու անհրաժեշտությամբ:
2.	Ծրագրի նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481)
4.	Ծրագրի կատարողը	«Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, քաղ. Տաշիր, քաղաքաշինության բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	260,000,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Լոռու մարզ, ք. Տաշիրի խոշորացված համայնք
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2019 թվականի օգոստոսի 10-ից մինչև 2020 թվականի նոյեմբերի 30-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Տաշիր խոշորացված համայնքի Լեռնահովիտ գյուղի փողոցների հարակից տարածքների 8000 քառ.մ քայլուղիների, հարակից շինությունների բարեկարգման և արտաքին լուսավորության աշխատանքներ՝ 250,000,000 դրամ Տաշիր խոշորացված համայնքի Լեռնահովիտ գյուղի փողոցների հարակից տարածքների կանաչապատման և հողային աշխատանքներ՝10,000,000 դրամ Նշված աշխատանքների իրականացման ժամկետը սահմանված է մինչև - 30.11.2020թ.
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ակնկալվում է ծառայությունների մատուցման, Հայաստանի Հանրապետության տարածքում շինարարական նյութերի և ապրանքների ձեռքբերման դիմաց հարկային արտոնություններ: 1. 8000 քառ.մ քայլուղիների կողային պատերի երեսպատման, 10000 քառ.մ հարակից շինությունների տանիքների հիմնանորոգման և բարեկարգման աշխատանքներ՝ 7,000,000 դրամ 2. 8000 քառ.մ քայլուղիների, հարակից շինությունների բարեկարգման համար շինանյութերի ձեռքբերում՝ 127.000.000 դրամ 3. 4000 քառ.մ հարակից շինությունների տանիքների հիմանորոգման համար շինանյութերի ձեռքբերում՝ 91.500.000 դրամ 4. 4000 քառ.մ քայլուղիների կողային գազատարների ապամոնտաժման և մոնտաժման աշխատանքներ՝ 15,000,000 դրամ 5. 40 հատ լեդ լուսատուների ներմուծում՝ 7,000,000 դրամ 6. 1000 հատ ծառերի, տնկիների ձեռքբերում՝ 7.000.000 դրամ 7. 1000 հատ ծառերի, տնկիների տնկման և հողային աշխատանքներ՝ 3.000.000 դրամ 8. Նախագծային աշխատանքներ ՝ 2,500,000 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր չի նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ Լոռու մարզ, Տաշիր քաղաքի համայնքապետարան

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև տեղեկատվություն կներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովին ծրագրի ընթացքի և ավարտի վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ